

2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԽԹԱՆՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

I. ՆԱԽԱԲԱՆ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ընդհանուր նկարագիրը Տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՏ) ոլորտը հանդիսանում է Հայաստանի տնտեսության ամենամեծ և ամենաարագ զարգացող ճյուղերից մեկը: Այն առաջատար դիրք է գրավում տեխնոլոգիական ինովացիաների, օտարերկրյա ներդրումների և աշխատուժի կատարելագործման բնագավառներում: Թե՛ միջազգային կորպորացիաները, թե՛ նորաստեղծ ընկերությունները հաջող գործունեություն են ծավալում երկրում ընդլայնելով իրենց բիզնեսը Հայաստանում: Հարուստ գիտակրթական ավանդույթները և բարձրակարգ կադրերն օգնեցին Հայաստանին ներգրավել տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ոլորտի համաշխարհային բազմաթիվ ընկերություններ: Այսօր Հայաստանում արդեն գործում են Եվրոպայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի տեխնոլոգիաների ոլորտի մի շարք ընկերությունների գիտահետազոտական և ծրագրավորման կենտրոններ: Այդ հաստատություններն աշխատում են աշխարհի բազմաթիվ կորպորացիաների կողմից կիրառվող գերժամանակակից տեխնոլոգիաներով և միջոցներով թողարկելով նոր արտադրանք և ծառայություններ, կամ առաջարկելով բիզնես խնդիրների նոր լուծումներ:

2000 թվականից ի վեր ՏՏ-ի ոլորտը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչվել է երկրի տնտեսական առաջընթացի կարևորագույն բաղադրիչներից մեկը: 2008 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված ՏՏ-ի ոլորտի զարգացման բազմակողմանի ռազմավարությունն ուղղված է զարգացնելու հեռահաղորդակցության և բիզնես ինկուբացիայի ենթակառուցվածքը, բարձրացնելու տեխնիկական կրթությամբ շրջանավարտների թիվը և որակավորումը, ընդլայնելու տեխնոլոգիական ոլորտի սկսնակ ընկերությունների աջակցման և ֆինանսավորման մեխանիզմները և խթանելու հայկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ոլորտի այլ կարևոր բնագավառների աճը: Այդ ռազմավարության հաջող իրականացումը կապահովի Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի բարձր մրցունակությունը և ճանաչումը ամբողջ աշխարհում, որի վառ ապացույցն են 2010-2011 թվականների ոլորտի զարգացումները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանն իր հարևան ԱՊՀ և Մերձավոր Արևելքի երկրների շարքում համարվում է առաջատար երկրներից մեկը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կարևորելով ՏՀՏ-ի արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակությունն ապահովելու հիմնական գործոն, հատուկ շեշտադրել է Հայաստանում ՏՀՏ-ի ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումն ու երկրում տեղեկատվական հասարակության ձևավորումը:

2001 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացավ Հայաստանի Հանրապետության ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը, իսկ 2008 թվականին՝ ՏՏ-ի ոլորտի զարգացման հայեցակարգը: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի N ՆՀ-896 հրամանագրով ստեղծվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը (այսուհետ՝ ՏՏԶԱԽ), որի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է: ՏՏԶԱԽ-ը, հանդիսանալով կապող օղակ Հայաստանի Հանրապետության կառավարության և ՏՏ-ի բիզնեսի, կրթական հաստատությունների, ՏՏ-ի հասարակական կազմակերպությունների, դոնոր և միջազգային կազմակերպությունների միջև, կազմակերպում և անց է կացնում տեղեկատվական հասարակության կայացմանը և ՏՏ-ի արդյունաբերության խնդիրների լուծմանը նպաստող քննարկումներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 7 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը՝ հաջորդող մի քանի տարիներին իրականացնելու համար:

Կնքվել են համագործակցության մի շարք պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ինչպես այլ պետությունների՝ Հնդկաստանի Հանրապետության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության և այլն, այնպես էլ համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի ընկերությունների հետ, ինչպիսիք են «Մայքրոսոֆթը», «Ալկաթելը», «Հյուլեթ Փակարդը», «Ման Մայքրոսիսթեմսը», «Նեյշնլ Ինսթրումենթսը», «Մենթոր Գրաֆիքսը», «Սիսկոն», «Ինթելը», «Սինոփսիսը», «Դ-Լինքը» և այլն:

Ավանդական են դարձել «Արմթեք» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների միջազգային համաժողովը և «Դիջիթեք» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացված ցուցահանդեսը:

Ոլորտն այսօր դարձել է ՏՏ-ի շուկայի բարձր եկամտաբերություն ապահովող ճյուղը և գրավիչ է խոշորածավալ օտարերկրյա ուղղակի ներդրումների համար:

Վերջին տասը տարիներին ոլորտում գրանցվել է նոր ընկերությունների կտրուկ աճ թե՛ տեղական նորաստեղծ ընկերությունների, թե՛ արտասահմանյան մասնաճյուղերի: Ընդ որում, արտասահմանյան ընկերությունների ավելի քան 80 տոկոսն ստեղծվել է 2000-2011 թվականների ընթացքում: 2011 թվականի գործող ՏՏ-ի ընկերությունների թիվը մոտ 300 է:

Առաջատար երկրների և միջազգային փորձի վերլուծական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում դրանց առաջավոր ուղղությունների տեղայնացման արդյունքում ՏՏ-ի ոլորտում բարձր վարձատրությամբ նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ արձանագրվել է նշանակալի առաջընթաց, մասնավորապես, 2011 թվականի դրությամբ ոլորտում ներգրավված է մոտ 5500 մասնագետ, իսկ հեռահաղորդակցության ոլորտի հետ միասին՝ ավելի քան 10000 մասնագետ, ընդ որում ծրագրավորողների համախառն տարեկան աշխատավարձը կազմում է շուրջ 5.280-14.520 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստանի համախառն ներքին արդյունքում ՏՏ-ի ոլորտի մասնաբաժինը կազմել է 1.7 տոկոս, ինչը կարող է համեմատվել Հնդկաստանի (1.4 տոկոս) և Գերմանիայի (1.3 տոկոս) հետ: 2011 թվականի ՏՏ-ի ընկերությունների ընդհանուր հասույթը հասել է 205 մլն ԱՄՆ դոլարի: ՏՏ-ի ոլորտի ընկերությունների արտադրանքի ու ծառայությունների շուրջ 50 տոկոսն արտահանվում է:

Վերը նշվածը վկայում է տարածաշրջանի և միջազգային շուկաներում հանրապետությունից արտահանվող ՏՏ-ի ոլորտի արդյունքի կայուն մասնաբաժնի ապահովման, ինչպես նաև արտահանման բնագավառում ոլորտի մասնաբաժնի և եկամտաբերության ավելացման մասին:

Հայաստանի Հանրապետության կառավարության Կայուն զարգացման ծրագրի 235-րդ կետով նախանշված ցուցանիշների կատարման ուղղությամբ ևս արձանագրվել է որոշակի առաջընթաց: Մասնավորապես, կառավարման գործընթացների բարելավման և հանրության համար վերջիններիս թափանցիկության բարձրացման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգի շրջանակում 2010 թվականին ներդրվել է www.e-gov.am էլեկտրոնային կառավարման պորտալը, որում մատուցվում են լիցենզիաների հայտերի էլեկտրոնային ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման, էլեկտրոնային վիզայի, Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման, էլեկտրոնային ստորագրությունների ստացման, էլեկտրոնային գնումների և այլ ծառայություններ: Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների գերակշիռ մեծամասնությունն ստեղծել և ներդրել է սեփական ինտերնետային կայքէջը: Նշենք, որ 2008-2010 թվականներին Հայաստանի միջազգային ինտերնետային կապի թողունակությունն աճել է շուրջ 10 անգամ 1083 մբիթ/վրկ-ից հասնելով 10547 մբիթ/վրկ-ի, իսկ ներքին ինտերնետ կապի թողունակությունը շուրջ 8 անգամ 434 մբիթ/վրկ-ից հասնելով 3681 մբիթ/վրկ-ի: Հայաստանի Հանրապետության բնակչության ինտերնետ հասանելությունը 5 տոկոսից աճել է՝ 2010 թվականին կազմելով շուրջ 44 տոկոս: Հայաստանի Հանրապետությունում համակարգիչների հագեցվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացվել է «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը:

Հայաստանը 2011 թվականին ստանձնել է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ՄՏՀԿ) շրջանակում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների աշխատանքային խմբի համակարգումը: 2011 թվականի նոյեմբերի 13-16-ը աշխատանքային խմբի՝ Թուրքիայում կայացած նիստում հաստատվել է

համակարգող երկրի՝ Հայաստանի կողմից ներկայացված 2011-2013 թվականների աշխատանքային ծրագրի նախագիծը, որը մշակվել էր ՄՕՏՀ-ի անդամ-երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի կողմից ընդունված հռչակագրի և համատեղ հայտարարությունների դրույթներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն և աստիճանական կերպով շարունակում է աջակցել ոլորտի հետագա զարգացմանը:

2011 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել էր 80 մլն դրամ որպես պետական աջակցություն՝ ուղղված ՏՏ-ի ոլորտի զարգացմանը: Նշված ծրագրի շրջանակում կատարվել են հետևյալ միջոցառումները՝

1) Հայաստանի ՏՏ-ի ոլորտը ներկայացնելը և խթանելը Հայաստանում և արտերկրում, հետազոտությունը, հասարակական իրազեկումը

Ծրագրի իրականացմամբ ակնկալվում էր ապահովել ՏՏ-ի ոլորտի զարգացման միտումների վերլուծությունն ու մարտահրավերների ուսումնասիրությունը, ոլորտի առաջնահարկումների ներկայացումը, ոլորտի զարգացման խթանման, ներկայացման և առաջնորդման համար մեխանիզմների մշակումը: Այդ ուղղությամբ իրականացված ՏՏ-ի ոլորտի հետազոտության արդյունքում մշակվել է ՏՏ-ի ոլորտի ներկա իրավիճակի վերլուծությունը, ինչպես նաև կատարվել է ՏՏ-ի ձեռնարկությունների վերաբերյալ ուղեցույցի թարմացում, ինչը, ըստ էության, ապահովել է ծրագրում նախանշված նպատակների արդյունավետ իրականացումը:

2) «Հայաստանում կազմակերպվող ցուցահանդեսներ, համաժողովներ» միջոցառման շրջանակում անց են կացվել մի շարք համաժողովներ, ցուցահանդեսներ, մրցույթներ: Դրանք են՝

Միջոցառման իրականացմամբ՝ հայաստանյան ՏՏ-ի ոլորտի ձեռքբերումները տեղական ցուցահանդեսներում, համաժողովներում և այլ միջոցառումներում ներկայացնելու արդյունքում, ակնկալվում էր ապահովել հասարակական իրազեկման բարձրացումը, տնտեսության այլ ճյուղերում ՏՏ-ի գործիքների և լուծումների ներդրման խթանումը, որի արդյունքում արտադրողականության աճի ու ապրանքների և ծառայությունների արտահանման ավելացումը: Կարող ենք փաստել, որ ծրագրի իրականացման արդյունքում ապահովվել է վերը նշված արդյունքների ձեռքբերման բարձր արդյունավետություն, մասնավորապես՝

ա) 2011 թվականի հոկտեմբերի 7-9-ը Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (այսուհետ՝ ԻՏՁՄ) կողմից կազմակերպվող «Դիջիթալ-2011» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների 7-րդ ամենամյա միջազգային ցուցահանդեսը, որի հիմնական նպատակը բարձր տեխնոլոգիաների ընկերությունների, գործարար սպառողների և հասարակության միջև հաղորդակցման բարենպաստ միջավայր ստեղծելն է: Ցուցահանդեսը հայաստանյան ՏՏ-ի դաշտի իրական պատկերն ուսումնասիրելու, ընկալելու, ձեռքբերումներն արձանագրելու, առկա մարտահրավերներն ու

հնարավորությունները տեսնելու հարթակ է և միտված է SS-ի ընկերությունների շուկա մուտք գործելուն և իրենց ապրանքների և ծառայությունների ցուցադրմանը, ինչպես նաև միջազգային կապերի ընդլայնմանը: «Դիջիթեք»-ը լուծում է նաև մի շարք այլ կարևոր խնդիրներ նախ խթանում է արտերկրում Հայաստանի, որպես բարձր տեխնոլոգիական իրադարձությունների երկրի իմիջի ձևավորմանը, բացի դրանից՝ ցուցահանդեսն ունի ներդրումների ներգրավման նպատակ՝ արտասահմանյան ներդրողներին հնարավորություն տալով տեղում ծանոթանալու ամբողջ ՏՀՏ-ի համայնքին և նախանշելու հետագա ծրագրեր: Ցուցահանդեսն ունի նաև կրթական նպատակ՝ երիտասարդ սերնդի այցելուներին ցուցադրելով, որ ապագան տեխնոլոգիական զարգացմանն է:

«Դիջիթեք-2011» ցուցահանդեսին մասնակցեցին տեղական, սինգապուրյան, թայվանական, ռուսական, լեհական, վրացական 115 ընկերություններ, ինչը 70 տոկոս ավելին էր նախորդ տարվա 68 ընկերությունների մասնակցության համեմատ: Տարեց տարի աճում է նաև ցուցահանդեսի այցելուների թիվը՝ 2011 թվականին գրանցելով ավելի քան 18.000 անձի այցելություն:

Ընկերությունները ցուցահանդեսի ընթացքում ներկայացրել են ՏՀՏ-ի սարքավորումներ և համակարգեր, ֆինանսաբանակային և հաշվապահական լուծումներ, արտադրության և բիզնես պրոցեսների ավտոմատացում, բարձր տեխնոլոգիական և ինժեներական լուծումներ, կրթությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, էլեկտրոնային կառավարում, համակարգչային գրաֆիկա և մուլտիմեդիա և այլն:

Ցուցահանդեսի ընթացքում բալթյան երկրների առաջատար SS-ի դիստրիբյուտոր «Ակմե Բոնմիյուբեր Բոնմիոնենթաբ» (ACC, այսուհետ՝ ԷյՍիՍի) հայտնեց հայկական SS-ի շուկա իր մուտք գործելու մասին: Ընկերությունը ներկայացնում է համաշխարհային առաջատար արտադրողների՝ «Ասուս», «Դելլ», «ԷլՋի», «Սոնի», «Ֆիլիպս», «Դ-Լինկ» և այլն:

Ոլորտին առնչվող կրթական ծրագրերը ցուցահանդեսում ներկայացրեցին Հայաստանի պետական ճարտարագիտական, Հայ-ռուսական (Սլավոնական), Հայաստանի Ամերիկյան և Եվրասիա միջազգային համալսարանները, Մխիթար Սեբաստացի կրթահամալիրը և այլ կրթական հաստատություններ:

«Դիջիթեք-2011» ցուցահանդեսում առանձին տաղավարով հանդես եկավ նաև Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը,

բ) «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համաժողովի ֆինանսավորում» միջոցառում:

2006 թվականի մայիսից իրականացվող «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP ծրագիր)» նպատակն է խթանել հայ գիտնականների և մասնավոր հատվածի միջև փոխգործակցությունը, ինչպես նաև նպաստել ընդհանուր իրազեկության մակարդակի բարձրացմանը, գիտնականների ու գործարարների պատրաստակամությանը հաստատելու փոխշահավետ կապեր և ներգրավելու անհրաժեշտ միջոցներ:

Միջոցառման շրջանակում 2011 թվականին իրականացվել է բիզնես համագործակցության աջակցության (ԲՀԱ) դրամաշնորհների մրցույթը, որին ներկայացվել է 12 ծրագիր:

Կիսաեզրափակիչ փուլ անցած 8 թիմերի ներկայացուցիչների համար կազմակերպվել է վերապատրաստում. յուրաքանչյուր թիմին տրամադրվել է անհատական խորհրդատվություն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի (այսուհետև՝ ՁԻՀ) կողմից: Վերջնական փուլը՝ Վենչուրային համաժողովը, տեղի է ունեցել 2011 թվականի հոկտեմբերի 11-ին: Գնահատման արդյունքում ընտրվել են 4 հաղթող թիմ, որոնցից յուրաքանչյուրին տրամադրվել է 15000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի մրցանակ, որի 50 տոկոսը համաֆինանսավորվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, իսկ 50 տոկոսը՝ ԱՄՆ-ի Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամի կողմից:

Միջոցառման շրջանակում 2011 թվականին իրականացվել է նաև «Տեխնոլոգիական ձեռներեցություն գործնական սեմինար և գործուղման դրամաշնորհ» ծրագիրը, որին դիմել են 12 կազմակերպություն, որոնց ներկայացուցիչները հունիսի 28-30-ը մասնակցել են «Տեխնոլոգիական ձեռներեցություն» գործնական սեմինարին: Սեմինարի վերջում թիմերից յուրաքանչյուրը ներկայացրել է իր բիզնես առաջարկը:

Գնահատման արդյունքում 2011 թվականի օգոստոսին ընտրվել են 3 հաղթող ծրագրեր, որոնց ներկայացուցիչները, որպես մրցանակ, ստացել են ԱՄՆ գործուղման հնարավորություն՝ հնարավոր գործընկերների և ներդրողների հետ բանակցություններ վարելու համար:

Միջոցառման շրջանակում 2011 թվականի իրականացվել են նաև ՏՏ-ի ոլորտի կլաստերային սեմինարներ,

զ) «ՏՏ ոլորտի մասնավոր հատվածի հետ «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների լիդերները՝ առանց փողկապների» արտագնա հանդիպում-քննարկումների ֆինանսավորում» միջոցառման շրջանակում 2011 թվականի փետրվարի 18-20-ը Ադվերանի «Արթուրս» հյուրանոցային համալիրում անցկացվել է «ՏՀՏ լիդերները՝ առանց փողկապների» խորագրով 2011 թվականի առաջին հանդիպում-քննարկումը, որը նվիրված էր ԻՏՁՄ-ի 2011-2013 թվականների երկարաժամկետ ռազմավարության և դրանում մատնանշված խնդիրների լուծման համար գործողությունների ծրագրի նախագծի քննարկմանը: Ֆորումի շրջանակում կազմակերպված թեմատիկ աշխատաժողովների արդյունքների ամփոփումը ԻՏՁՄ-ին հնարավորություն տվեց պատրաստելու միության 2011-2013 թվականների ռազմավարությունը, որն այնուհետև հաստատվեց 2011 թվականի ապրիլի 8-ին կայացած ԻՏՁՄ-ի 11-րդ համագումարին:

2011 թվականի թվով երկրորդ ֆորումը կազմակերպվեց Երևանում 2011 թվականի մայիսի 27-ին և հունիսի 6-ին: Հանդիպման ընթացքում ներկայացվեց նաև Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական, հեռահաղորդակցման տեխնոլոգիաների, ճարտարագիտության և ինովացիաների խթանման լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտության մասին հայեցակարգը:

2011 թվականի սեպտեմբերի 17-19-ը Ադվերանի «Ադվերան» հյուրանոցային համալիրում անցկացվել է «ՏՀՏ լիդերները՝ առանց փողկապների» խորագրով երրորդ հանդիպում-քննարկումը, որը նվիրված էր Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացվելիք

ՀՊՃՀ ինստիտուտի բարեփոխումների և Հայաստանում տեխնոլոգիական ձեռներեցության առաջնային զարգացման առաջարկությունների քննարկմանը:

2011 թվականի հոկտեմբերի 28-30-ը Ստեփանակերտում անցկացվեց 2011 թվականի 4-րդ «ՏՀՏ-ի լիդերների հանդիպում» համաժողովը:

2011 թվականի դեկտեմբերի 9-11-ը Դիլիջանի «Բեսթ Վեսթերն Փարադայս» հյուրանոցային համալիրում տեղի ունեցավ 2011 թվականի 5-րդ ՏՀՏ-ի լիդերների հանդիպում-քննարկումը, որը նվիրված էր էլեկտրոնային առևտրի ոլորտում առկա խնդիրների քննարկմանը:

Նշված հանդիպումների իրականացմամբ բարձրացվել է հասարակության իրազեկվածությունը և ամրապնդվել են ՏՏ-ի ոլորտի ներքին կապերը՝ հիմք ստեղծելով նորարարությունների, արտադրողականության բարձրացման և ՏՏ-ի ոլորտի ու հանրության միջև առավել լայն կապերի ամրապնդման համար,

դ) 2011 թվականի հոկտեմբերի 10-11-ը Երևանում տեղի ունեցավ «ԱրմԹեք 2011» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների 4-րդ ամենամյա համաժողովը, որն անցկացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի բարձր հովանու ներքո: Համաժողովի նպատակն է լուսաբանել Հայաստանի տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող բարձր տեխնոլոգիաների ոլորտի աճը, խթանել միջազգային համագործակցությունը և ներդրումների ներգրավումը, նպաստել ՏՏ-ի ոլորտի մասնագետների միջև համագործակցությանը, Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտը դարձնել գլոբալ ճանաչելի:

Համաժողովի կազմակերպման նպատակով 2011 թվականի հունվարին կազմվել էր համաժողովի կազմկոմիտե և երեք աշխատանքային խմբեր՝ ծրագրային աշխատախումբ, մարքեթինգային աշխատախումբ և լոգիստիկ աշխատախումբ:

ԶԻՀ-ի կողմից գրանցվել է www.armtechcongress.am դոմեյնը և վերաբացվել է համաժողովի վեբկայքը: Վերամշակվել և համաժողովի կայքէջում տեղադրվել է համապատասխան բովանդակություն:

Համաժողովի օրակարգը ներառում էր ավելի քան 60 խոսնակներ, որոնց թվում էին Հայաստանի ՏՀՏ-ի և բարձր տեխնոլոգիաների ոլորտի ճանաչված մասնագետներ, համաշխարհային խոշորագույն ՏՏ-ի ընկերությունների՝ ներառյալ Սիսկոյի, Մենթոր Գրաֆիքսի (Mentor Graphics), Ինթելի, Սինոփսիսի, Դ-Լինքի և այլ կազմակերպությունների ղեկավար պաշտոնյաներ և միջազգային փորձագետներ ԵՄ-ից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից, ԱՊՀ երկրներից և Արևելյան Ասիայից:

Համաժողովն աննախադեպ հնարավորություն ընձեռեց ավելի քան 250 մասնակիցների քննարկելու ոլորտի ռազմավարական խնդիրները, գնահատելու զարգացման միտումները և ծանոթանալու ոլորտի վերջին նորամուծություններին:

Միջոցառման արդյունավետ և ամբողջական կազմակերպման նպատակով ներգրավված համաֆինանսավորումը կազմել է ավելի քան 10 մլն դրամ,

ե) «Դիջիթեք բիզնես ֆորում» միջոցառման շրջանակում 2011 թվականի 24-25-ը «Արմենիա Մարիոթ» հյուրանոցային համալիրում տեղի ունեցավ 4-րդ ամենամյա Դիջիթեք բիզնես ֆորումը, որն իր շուրջը հավաքեց տեխնոլոգիական ապրանքներ ու ծառայություններ մատուցողներին և գործարար սպառողներին: Ֆորումի ընթացքում իրենց տեխնոլոգիական նորագույն լուծումներն ու ինովացիոն մտացունենքը ներկայացրեցին շուրջ 30 կազմակերպություններ:

Դիջիթեք բիզնես ֆորումին զուգահեռ տեղի ունեցավ նաև Մայքրոսոֆթ ինովացիոն ֆորումը, որի շրջանակում նշվեց Մայքրոսոֆթ Հայաստանի 5-րդ տարեդարձը, ամփոփվեց ընկերության գործունեությունը, քննարկվեցին ձեռքբերումները կրթության ոլորտում, նորաբաց Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը և «Երևակայության Գավաթ» մրցույթը Հայաստանում և այլն: Ֆորումի ընթացքում կնքվեց եռակողմ համագործակցության համաձայնագիր ԻՏՁՄ-ի, ՁԻՀ-ի և «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամի միջև:

3) «Միջազգային համագործակցություն» միջոցառման շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

ա) «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի ծրագրի իրականացում» միջոցառման շրջանակում 2011 թվականի մայիսի 11-ին տեղի ունեցավ Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի (այսուհետ՝ ՄԻԿ) բացման պաշտոնական արարողությունը:

Բացման արարողության ընթացքում ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության, ՁԻՀ-ի, Մայքրոսոֆթ ԱրԷյ ընկերության և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի միջև ստորագրվեց Փոխըմբռնման հուշագիր, որով կողմերը վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը շարունակել համագործակցությունը՝ Կենտրոնի կայացմանն աջակցելու գործում:

ՄԻԿ-ը համագործակցություն է հաստատել «Մայքրոսոֆթ» ընկերության հայազգի աշխատակիցների հետ, ովքեր ձևավորել են Հայաստանի ՄԻԿ-ին աջակցության խումբ և պատրաստակամություն են հայտնել նպաստելու կենտրոնի ծրագրերի իրականացմանը: Այս համագործակցության շրջանակում արդեն իսկ 2011 թվականի հոկտեմբերին կազմակերպվել են մի շարք սեմինարներ:

2011 թվականին ՄԻԿ-ի կողմից կազմակերպվել են մի քանի մակարդակներով կարճաժամկետ և երկարաժամկետ մասնագիտական դասընթացներ և սեմինարներ: Դասընթացների մասնակիցների մեծամասնությունն այժմ ընդգրկված են ՄԻԿ-ի ծրագրերում: 2011 թվականին կազմակերպված դասընթացների ընդհանուր տևողությունը շուրջ 900 ժամ է, դասընթացների և սեմինարների մասնակիցների թիվը՝ շուրջ 900:

ՄԻԿ-ը հանդիսացել է Մայքրոսոֆթի ամենամյա «Երևակայության գավաթ» մրցույթի համակազմակերպիչ: Մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել «Իքս-Թիչ», «Էկո-ֆրենդս» և «Անակա» թիմերը՝ զբաղեցնելով համապատասխանաբար 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը:

ՄԻԿ-ը մշակել է «Նորարար գաղափար» մրցույթի նոր ձևաչափի` Հեքըթոն [ՅԱՆ] Երևան, որը կայացել է 2011 թվականի դեկտեմբերի 17-18-ը, և նվիրված էր Երևան քաղաքի խնդիրների լուծմանը: Մրցույթն անց է կացվել պետական, մասնավոր և հասարակական մի շարք կազմակերպությունների համատեղ ջանքերով: Մրցույթին մասնակցեցին ավելի քան 40 թիմ: Մրցույթի արդյունքում տրվեցին մրցանակներ 8 անվանակարգերով` 7 թիմերի:

«Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի ծրագրի իրականացում» միջոցառման համաֆինանսավորումը 2011 թվականին կազմել է ավելի քան 160 մլն դրամ,

բ) «Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի ծրագրերի իրականացում» միջոցառման շրջանակում 2007 թվականին որոշվել էր նախաձեռնել հայ-հնդկական ՏՀՏ-ի ոլորտների համագործակցության համատեղ ծրագիր և հիմնել ՏՀՏ-ի ուսումնական կենտրոն ՁԻՀ-ի հետ համատեղ: Հայաստանի և Հնդկաստանի կառավարությունների միջև 2009 թվականի հունիսին կնքվել էր փոխհամաձայնության հուշագիր` Հայաստանում հայ-հնդկական ՏՀՏ-ի վերապատրաստման կենտրոն ստեղծելու մասին:

Կենտրոնի պաշտոնական բացման արարողությունը տեղի է ունեցել 2011 թվականի նոյեմբերի 7-ին Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մասնաշենքում:

2011 թվականի փետրվարի 3-4-ը կազմակերպվել է Բարձր արտադրողականության հաշվողական տեխնոլոգիայի վերաբերյալ գիտահետազոտական սեմինար, որը վարվել է հնդիկ մասնագետների կողմից: Սեմինարի նպատակն էր ներկայացնել ԲԱՀ-ի օգտագործման հնարավորությունները գիտահետազոտական աշխատանքների և ծրագրերի իրականացման համար: Սեմինարին մասնակցել է 20 անձ:

Հունիսի 15-18-ը իրականացվել է «Վեր աշխատածրագրերի անվտանգություն» կարճատև դասընթաց: Դասընթացի հիմնական նպատակն էր ծանոթացնել ուսանողներին վեր աշխատածրագրերի անվտանգության տեսության և գործնական հմտությունների հետ: Դասընթացին մասնակցել է 19 անձ:

Մասնագետների կողմից իրականացվել են կենտրոնի ցանցի և համակարգչային տեխնիկայի տեղադրման աշխատանքները, ինչպես նաև «ՊԱՐԱՄ» գերհամակարգչի և էլեկտրոնային կրթության համակարգի տեղադրման աշխատանքները:

Հոկտեմբերի 26-ին Հնդկաստանից Հայաստան են ժամանել երկու մասնագետ, որոնք կես տարվա ընթացքում ՁԻՀ-ի հետ համատեղ կմշակեն կենտրոնի աշխատանքային պլանը և ուսումնական ծրագիրը, կիրականացնեն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ դասընթացներն ուսանողների, դասախոսական անձնակազմի և ՏՏ-ի մասնագետների համար,

գ) «Ինթել և Սիսկո ընկերությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում» միջոցառման շրջանակում Ամերիկյան «Հյուլեթ Փակարդ» և «Ինթել» ընկերությունների հետ համատեղ մշակվել է «Համակարգիչ ուսուցիչների համար» ծրագիրը` ուղղված դպրոցների ուսուցիչներին, որոնց հիմնական մասը չունեն համակարգչից օգտվելու հնարավորություն թե՛ տանը, թե՛ աշխատավայրում:

«Ինթել» ընկերության հետ համատեղ մշակվել է նաև «Դպրոցական համակարգիչ» ծրագիրը, որի շրջանակում հայ աշակերտները հնարավորություն կունենան ստանալու շարժական և տարբեր այլ կարգի լուծումներ՝ բավարարելով տեխնոլոգիական ուսուցման և տեղեկատվական հասանելիության արդի պահանջները: Այս ծրագրի փորձնական փուլում ներառված հայաստանյան 2 կրթահամալիրների աշակերտներին «Ինթել» ընկերության կողմից նվիրվել է 60 դյուրակիր համակարգիչ, որոնք ակտիվորեն կիրառվում են աշակերտների կողմից ուսումնական պրոցեսում:

«Դպրոցական համակարգիչ» փորձնական ծրագրի շրջանակում 2011 թվականի հունիսի 20-24-ը Երևանում դպրոցների ուսուցիչների համար անցկացվել է «Աշխատանք «1 աշակերտ-1 համակարգիչ» ուսումնական մոդելով» դասընթացը: Դասընթացին մասնակցեցել են 25 ուսուցիչներ՝ Երևանից, Հայաստանի տարբեր մարզերից և Արցախից: 4 ուսուցիչներ մասնակցել են նաև Ինթելի կողմից Վրաստանի Քուրայիսի քաղաքում կազմակերպված «1 աշակերտ-1 համակարգիչ» ուսումնական մոդելի ճանաչողական-գործնական դասընթացին: Դասընթացներին մասնակցած ուսուցիչները հետագայում կներգրավվեն «Դպրոցական համակարգիչ» ծրագրի լայնամասշտաբ ներդրման գործընթացում որպես «Ուսուցիչների ուսուցիչներ»:

Պիլոտային ծրագրում ներգրավված էր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կողմից հուլիսի 20-ից նախաձեռնված «Դասարան անիվների վրա» նախագիծը, որն իրականացվում էր Երևան-Եղեգնաձոր-Գորիս-Շուշի-Ստեփանակերտ-Ամարաս-Գանձասար երթուղով:

2011 թվականի մարտից ՄԻՍԿՈ Ցանցային ակադեմիայում մեկնարկել են երկարաժամկետ մասնագիտական դասընթացները: Անցկացվել է 6 ուղղություններով դասընթացներ, մասնակիցների թիվը՝ շուրջ 90: Նոյեմբերից մեկնարկել է նաև երկու կարճաժամկետ դասընթաց հետևյալ թեմաներով՝ օբյեկտակոդմոդըլված ծրագրավորում և տվյալների շտեմարաններ, մասնակիցների թիվը՝ մոտ 20 ուսանող:

ՄԻՍԿՈ-ի հետ համագործակցությունն ընդլայնելու նպատակով ՁԻՀ-ն իրականացրել է ՄԻՍԿՈ լաբորատորիաների համաշխարհային ցանցի ուսումնասիրություն և Հայաստանի Հանրապետությունում լաբերի հիմնադրման պոտենցիալի գնահատում: Նախատեսվում է նաև «ՄԻՍԿՈ» կենտրոնի հիմնադրումը, ինչի նպատակով մշակվել է կենտրոնի մոդելը՝ հիմնված ՄԻՍԿՈ Ձեռներեցության ինստիտուտների և ՄԻՍԿՈ լաբորատորիաների համաշխարհային ցանցերի ուսումնասիրության արդյունքների վրա:

«ԷյչՓի», «ՄԻՍԿՈ» և «Մայքրոսոֆթ» վերագրային ընկերությունների աշակցությամբ ՁԻՀ-ը և ԻՏՁՄ-ն Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ մշակել են «Երևանյան դպրոցներում SS-ի խմբակների ստեղծման ծրագիրը», որը կոչված է բարձրացնելու դպրոցականների SS-ի գիտելիքները և խթանելու հետաքրքությունը ոլորտի նկատմամբ: Ծրագրի պիլոտային փուլին մասնակցող 31 երևանյան դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են մեկամսյա անվճար SS-ի խմբակներ 5-րդ դասարանցիների համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2011 թվականի ծրագրի իրականացումը նշանակալի ներդրում է ունեցել Հայաստանում տնտեսական զարգացման, միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ենթակառուցվածքի ստեղծման, Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ենթակառուցվածքի ամրապնդման, ինչպես նաև համաշխարհային շուկայում և, հատկապես, աճի բարձր պոտենցիալով շուկայական թիրախային սեգմենտներում հայաստանյան ՏՏ-ի ոլորտի ներթափանցման ու ներկայության ապահովման, եկամուտների բարձրացման և գիտելիքահենք տնտեսության կայացման գործընթացում:

Ծրագրով նախատեսված պետական պարտավորությունների միջոցով հնարավորություն ընձեռվեց երկրի տնտեսական դաշտ ներգրավել նորանոր ներդրումներ, ինչպես նաև համաշխարհային ճանաչում ունեցող ՏՏ-ի կազմակերպությունների՝ խթանելով տնտեսության այլ ճյուղերում ՏՏ-ի լուծումների ներդրումը, ՏՏ-ի ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման միջոցով նշված երկրների փորձը երկրում ներդնելով: Վերջինս իր հերթին խթան հաղիսացավ Հայաստանի վարկանիշի բարձրացման, սփյուռքահայության հետ համագործակցության ընդլայնման, հայաստանյան ՏՏ-ի ոլորտի ձեռքբերումները տեղական ցուցահանդեսներում, համաժողովներում և այլ միջոցառումներում ներկայացնելու արդյունքում հասարակական իրազեկման բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման, ոլորտի մասնագետների մասնագիտական հմտությունների զարգացման գործում:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հիմնախնդիրները

Տեղեկատվական տեխնոլոգիաները մեր տնտեսության ամենամեծ հավակնություններ ունեցող ոլորտներից է, որն ապահովում է մեծ քանակությամբ բարձր վարձատրվող աշխատատեղեր և Հայաստանի տնտեսության մեջ ամենաբարձր հավելյալ արժեք ձևավորող ոլորտն է, ինչով էլ լիովին հիմնավորված հայտնվել է երկրի տնտեսության զարգացման գերակայությունների շարքում: Սակայն վերլուծությունները ցույց են տալիս, որ ՏՏ-ի ոլորտից մեր ակնկալիքները կարող են արդարանալ զարգացման հետևողական, նպատակային քաղաքականություն վարելու դեպքում, երբ ոլորտի հիմնախնդիրները՝ ելնելով տարածաշրջանային և համաշխարհային զարգացումների թելադրանքից, արագ լուծումներ ստանան, երբ ապահովվի խոշոր արտասահմանյան ընկերությունների մուտքը և նոր ներդրումների հոսքը Հայաստան: ՏՏ-ի ոլորտը պետք է ունենա առավել համախմբվելու, արտաքին աշխարհում համակարգված քայլերով շուկաներ գրավելու և ընդհանուր ոլորտային խնդիրները համատեղ լուծելու կարողություն: Տեխնոլոգիաների զարգացման մերօրյա սրընթաց ժամանակաշրջանում ՏՀՏ-ի ներդրումն այսօր վերածվել է օբյեկտիվ անրիաժեշտության, որն իր հերթին նպաստում է տնտեսության զարգացմանը, գիտության, մշակույթի ու յուրաքանչյուր անհատի, քաղաքացու առաջընթացին:

SS-ի ոլորտի զարգացման միտումների հետ մեկտեղ, ոլորտի մասնավոր հետազոտությունների, փորձագիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: Դրանք են, մասնավորապես, ՏՀՏ-ի ոլորտի և տեղեկատվական հասարակության ձևավորման բարդությունները, SS-ի ոլորտի առաջնային զարգացումն ու տեղեկատվական հասարակության կայացումն ապահովող կիրարկման մեխանիզմների բարելավումը, SS-ի ոլորտի զարգացմանն ու տեղեկատվական հասարակության կայացմանը նպաստող ներդրումների խթանման հետ կապված խնդիրները, SS-ի ընկերությունների արտադրանքի և ծառայությունների՝ տեղական, ինչպես նաև համաշխարհային շուկաներում հեղինակության և ճանաչման դժվարությունները, ՏՀՏ-ի ոլորտում որակյալ և մրցունակ կրթական միջավայրի ձևավորման, կադրերի մասնագիտական ուսուցմանն ու վերապատրաստման առկա դժվարությունները, SS-ի ոլորտում գործունեության ծավալման և SS-ի գործիքների համատարած կիրառման համար բարենպաստ գործարար միջավայրի և համաշխարհային չափանիշներին համապատասխանող անհրաժեշտ ՏՀՏ-ի ենթակառուցվածքների անբավարարությունը:

Նշված հիմնախնդիրների հաղթահարմանն են ուղղված 2012 թվականի ընթացքում նախատեսվող ծրագրային միջոցառումները՝ կարևոր նախապայման հանդիսանալով ոլորտի զարգացման նոր ռազմավարության և երկրի ընդհանուր տնտեսական աճի ապահովման համար:

II. ՏՏ-Ի ՈԼՈՐՏԻ ԽԹԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. ՏՏ-ի ոլորտի խթանման ծառայությունների 2012 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման և իրականացման հիմքը «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է:

4. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը ճանաչելու մասին» N 58 արձանագրային որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1207-Ն որոշումը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին» N 380-Ա որոշումը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշումը.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի նիստի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 35 արձանագրային որոշումը.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 25-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 7 արձանագրային որոշումը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5. Ծրագրի իրականացման հիմնական նպատակը Հայաստանում տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակության և զարգացած ու համաշխարհային ճանաչում ունեցող ՏՏ-ի ոլորտի կայացմանն աջակցելն է: Մասնավորապես՝

1) Հայաստանում ՏՀՏ-ի կատարելագործված ենթակառուցվածքներով, համակարգչային բարձր գրագիտությամբ, համակարգչային հագեցվածության և ինտերնետ հասանելիության բարձր աստիճանով, համատարած կիրառվող էլեկտրոնային ծառայությունների համակարգերով, մեծածավալ տեղական ՏՏ-ի շուկայի առկայությամբ և առաջադեմ գիտելիքահենք արդյունաբերությամբ երկրի վարկանիշի ապահովումը.

2) մեծ հավելյալ արժեք ստեղծող հետազոտական և բարդ ինժեներական լուծումներ և ծառայություններ մատուցող ընկերություններով, միջազգային շուկաներում մրցունակ տեղական ՏՏ-ի արտադրանքով զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացումը.

3) համաշխարհային շուկայում մրցակցային առավելություններ ունեցող հայկական ՏՏ-ի ապրանքային նշանի ներթափանցումն ու ներկայությունն ապահովող միջոցառումների իրականացումը.

4) հայկական ՏՀՏ-ի ոլորտի մի շարք կարևոր բնագավառների աճը խթանելու նպատակով համապատասխան կրթությամբ մասնագետների պատրաստման, որակյալ աշխատուժի աճի պահպանման և զարգացման խնդիրների լուծումը:

6. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) ՏՏ-ի ոլորտի զարգացման միտումների վերլուծությունն ու մարտահրավերների ուսումնասիրությունը, ոլորտի առաջխաղացումների ներկայացումը, ոլորտի զարգացման խթանման, ներկայացման և առաջնդման համար մեխանիզմների մշակումը.

2) հայաստանյան ՏՏ-ի ոլորտի ձեռքբերումները տեղական ցուցահանդեսներում, համաժողովներում և այլ միջոցառումներում ներկայացնելու արդյունքում հասարակական իրազեկման բարձրացումը, տնտեսության այլ ճյուղերում ՏՏ-ի գործիքների և լուծումների ներդրման խթանումը, որի արդյունքում արտադրողականության աճի ու ապրանքների և ծառայությունների արտահանման ավելացումը.

3) SS-ի ոլորտի զարգացմամբ հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման միջոցով նշված երկրների փորձի ներդրումը, սփյուռքահայության հետ համագործակցության ընդլայնումը, ներդրումների ներգրավումը, նպատակային երկարաժամկետ ծրագրերի իրականացումը և երկրի տնտեսական դաշտ համաշխարհային ճանաչում ունեցող SS-ի կազմակերպությունների ներգրավումը՝ վերջիններիս փորձի, հեղինակության ու կապերի շնորհիվ Հայաստանի վարկանիշի բարձրացումը՝ հասցնելով այն զարգացած երկրների վարկանիշի մակարդակին և նպաստելով Հայաստանի, որպես տարածաշրջանային SS-ի հանգույցի իմիջի ձևավորմանը.

4) ոլորտի մասնագիտական կարողությունների զարգացումը, մասնավորապես, Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի գարծունեության ապահովումը, դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպումը, Սիսկոյի ցանցային ակադեմիայի գործունեության ապահովումը, մասնագիտական դասընթացների կազմակերպումը, Ինթել կազմակերպության հետ համատեղ վերապատրաստման դասընթացների իրականացումը, ինչպես նաև SS-ի ոլորտի նշված վերազգային կազմակերպությունների հետ ստորագրված հուշագրերով նախատեսված այլ միջոցառումների իրականացումը:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

7. Ծրագիրն իրականացվում է պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցությամբ՝ որպես պետական աջակցություն՝ ուղղված Հայաստանում SS-ի ոլորտի շարունակական զարգացմանը և միջազգային շուկաներում դիրքավորմանը, երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորման ուղղությամբ իրական հնարավորությունների ստեղծմանը:

V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

8. Հայաստանի SS-ի ոլորտի ներկայացում և խթանում Հայաստանում ու արտերկրում, հետազոտություն, հասարակական իրազեկում

1) SS-ի ոլորտի զարգացման հայեցակարգով առաջնային խնդիրներից է հանդիսանում արտերկրում և Հայաստանում ոլորտը ներկայացնելը, SS-ի ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության խթանումն ու ապահովումը, միջազգային SS-ի կազմակերպություններին անդամակցումը, Հայաստանի վարկանիշի ձևավորումը՝ որպես SS-ի տարածաշրջանային կենտրոն, այդ թվում նպաստելով Հայաստանում մի շարք միջազգային

նշանակության միջոցառումների պարբերական անցկացմանը, նպատակային երկարաժամկետ ծրագրերի իրականացումը և երկրի տնտեսական դաշտ համաշխարհային ճանաչում ունեցող SS-ի կազմակերպությունների ներգրավումը՝ վերջիններիս փորձի, հեղինակության ու կապերի շնորհիվ Հայաստանի վարկանիշի բարձրացման և հայկական SS-ի ապրանքային նշանի առաջխաղացման նպատակով.

2) Հայաստանի SS-ի ոլորտի ներկայացումը և խթանումը Հայաստանում ու արտերկրում, հասարակության իրազեկումը պատշաճ կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ է համապատասխան նյութերի նախապատրաստում և տպագրում: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել ոլորտին վերաբերող հետազոտություններ և վերլուծություններ, որոնք կներկայացնեն SS-ի ոլորտի ներկա իրավիճակը, այդ թվում հիմնական խնդիրները և մարտահրավերները, ռազմավարական զարգացման հեռանկարները և վերջին տարիներին գրանցված նվաճումները: Դրանք կհանդիսանան կարևոր գործիք ոչ միայն բազմաթիվ միջոցառումների, հանդիպումների ընթացքում հայկական SS-ի ոլորտն ամփոփ և դիտարժան ներկայացնելու, այլև տեղեկատվական աղբյուր կհանդիսանան SS-ի ոլորտի առջև ծառայած հիմնական խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղիների, ոլորտի աճի հեռանկարների, ներդրումների խթանման և հետագա զարգացման ռազմավարության մշակման համար.

3) Հայաստանի SS-ի ոլորտի ներկայացումը միջազգային և տեղական շուկաներում, խոշորագույն ցուցահանդեսներում և գազաթնաժողովներում հանդիսանում է կրիտիկական գործոն Հայաստանի՝ որպես SS-ի երկրի վարկանիշը ձևավորելու, հայկական SS-ի ոլորտի կարողությունները և ձեռքբերումները ցուցադրելու, առանձին ընկերությունների կողմից իրենց ծրագրային փաթեթները և ծառայությունները ներկայացնելու ու բիզնես կապեր ստեղծելու, միջազգայնորեն մրցունակ հայկական SS-ի ապրանքային նշանը ձևավորելու, ինչպես նաև ոլորտի վերջին միջազգային նվաճումներին ծանոթանալու և շուկայական ուսամասսիրություններ կատարելու համար.

4) Հայաստանում կազմակերպվող միջոցառումները (ցուցահանդեսները, համաժողովները, մրցույթները և այլն) նպատակ ունեն ցուցադրելու հայկական SS-ի ոլորտի ձեռքբերումները և նվաճումները, կառավարության, մասնավոր հատվածի, գիտական և կրթական հաստատությունների և դոնոր կազմակերպությունների համագործակցության, միասնության և համատեղ ջանքերի արդյունքները: Դրանք կնպաստեն նաև իրազեկության բարձրացմանը և ոլորտի ներքին կապերի ամրապնդմանը՝ հիմք ստեղծելով նորարարությունների, արտադրողականության բարձրացման և SS-ի ոլորտի ու առավել լայն հանրության միջև կապերի ամրապնդման համար Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կկազմակերպվեն «Դիջիթեք-2012» ցուցահանդեսը, «Արմենիա Մարիոթ» հյուրանոցային համալիրում «Դիջիթեք բիզնես ֆորում 2012» համաժողովը, Ադվերանի «Ադվերան», Հանքավանի «Անի», Դիլիջանի «Բեսթ Վեսթերն Փարադայս» և Ստեփանակերտի «Արմենիա» հյուրանոցային համալիրներում SS-ի ոլորտի մասնավոր հատվածի հետ «ՏՀՏ լիդերները՝ առանց փողկապների» խորագրով պարբերաբար

անցկացվող արտագնա հանդիպում-քննարկումները, «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համաժողովը, ԱՄՆ-ում՝ «Արմթեք 2012» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովը:

9. Միջազգային համագործակցություն՝

1) Հայաստանի տնտեսության և, մասնավորապես, երկրի SS-ի ոլորտի մրցունակության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի SS-ի խոշոր վերազգային կազմակերպությունների ներկայությունը Հայաստանում և դրանց հետ կառավարության և (կամ) մասնավոր հատվածի մակարդակով համատեղ ներդրումային և կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը: Այդ գործընթացի հիմնական նպատակն է խթանել արտասահմանյան ներդրումները Հայաստանում, ստեղծել նոր աշխատատեղեր, ինչպես նաև ծանոթանալ և կիրառել լավագույն միջազգային փորձը: Նման նախաձեռնությունները պահանջում են երկարաժամկետ պետական պարտավորությունների ստանձնում, քանի որ նման պարտավորության առկայությունը հանդիսանում է համագործակցության երաշխավորման հիմնական գրավական, իսկ որոշ դեպքերում նաև նախապայման:

2) միջոցառման շրջանակում կշարունակվեն իրականացվել Հայ-հնդկական ՏՀՏ-ի ուսումնական կենտրոնի, Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի ծրագրի և Ինթել ու Սիսկո ընկերությունների հետ համատեղ ծրագրերը:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով՝ որպես ծրագրի իրականացմանը պետական աջակցության կողմնորոշիչ չափաքանակ է սահմանվել 80.000.0 հազ. դրամը:

11. SS-ի ոլորտի խթանման ծառայությունների 2012 թվականի ծրագիրը կֆինանսավորվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ց Ա Ն Կ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԽԹԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Կատարման արդյունքները
1	2	3	4	5
1.	Հայաստանի ՏՏ-ի ոլորտը ներկայացնելը և խթանելը Հայաստանում և արտերկրում, հետազոտություն, հասարակական իրազեկում			Այս միջոցառումները նպատակ ունեն վերլուծելու ՏՏ-ի ոլորտի զարգացման միտումները և ուսումնասիրելու մարտահրավերները, ներկայացնելու ոլորտի առաջխաղացումները, ձևավորելու մեխանիզմներ ոլորտի զարգացման խթանման, ներկայացնելու և առաջնդման համար:
	1.1. ՏՏ-ի ոլորտի հետազոտություն, ընկերությունների վերաբերյալ ուղեցույց և ներկա իրավիճակի վերլուծություն	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. ընթացքում	ՏՏ-ի ոլորտի հետազոտության, ներկա իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքում ոլորտի հիմնական խնդիրների և մարտահրավերների բացահայտում

1	2	3	4	5
	1.2. «Դիջիթեք 2012» ցուցահանդեսի և դրա շրջանակում այլ միջոցառումների ֆինանսավորում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն (համաձայնությամբ)	2012 թ. 2-րդ կիսամյակ	«Դիջիթեք-2012» ցուցահանդեսի և դրա շրջանակում իրականացվող այլ միջոցառումներին ակնկալվում է շուրջ 20000 մարդու այցելություն: Ցուցահանդեսը հնարավորություն կտա ոլորտի ընկերությունների միջև նոր կապեր ստեղծելուն, ինչպես նաև ոլորտի նոր ընկերություններին շուկա մուտք գործելուն և իրենց ապրանքներն ու ծառայությունները ցուցադրելուն:
	1.3. «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համաժողովի ֆինանսավորում» միջոցառման կազմակերպում և իրականացում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. 2-րդ կիսամյակ	Միջոցառման, մասնավորապես, դրա շրջանակում անցկացվող «Բիզնես համագործակցության աջակցման» արդյունքում՝ մասնավոր ընկերությունների և գիտնականների թիմերի միջև գիտահետազոտական ոլորտում գործընկերության խթանում՝ երկու կողմերի համար տնտեսապես փոխշահավետ նոր հնարավորությունների զարգացմամբ: Մրցույթի անցկացման արդյունքում՝ մինչև 5 դրամաշնորհների տրամադրում:
	1.4. ՏՏ-ի ոլորտի մասնավոր հատվածի հետ «ՏՀՏ-ի լիդերները՝ առանց փողկապների» խորագրով անցկացվող պարբերաբար արտագնա հանդիպում-քննարկումների կազմակերպում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն (համաձայնությամբ)	2012 թ. ընթացքում	Միջոցառման շրջանակում կկազմակերպվեն մինչև 5 «ՏՀՏ-ի լիդերները՝ առանց փողկապների» հանդիպումներ Աղվերանի «Աղվերան», Հանքավանի «Անի», Դիլիջանի «Բեսթ Վեսթերն Փարադայս» և Ստեփանակերտի «Արմենիա» հյուրանոցային համալիրներում: Ակնկալվում է, որ կմասնակցեն ոլորտի 100 կազմակերպությունների ներկայացուցիչներ, պետական 5 գերատեսչությունների ղեկավարներ, 25 նորաստեղծ ընկերությունների ներկայացուցիչներ, ոլորտի գործունեությունը լուսաբանող 20 լրագրողներ:

1	2	3	4	5
	1.5. «Դիջիթեք բիզնես ֆորում 2012» համաժողով	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն (համաձայնությամբ)	2012 թ. 1-ին կիսամյակ	Միջոցառումը կներկայացնի տնտեսության այլ ճյուղերում ՏՏ-ի ոլորտի գործիքների և լուծումների կիրառման հնարավորությունները, կնպաստի գործնական կապերի ստեղծմանը:
	1.6. «ԱրմԹ-եք 2012» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովի կազմակերպում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. 2-րդ կիսամյակ	Միջոցառումը կնպաստի գործարար և մասնագիտական տեղեկատվության ստացմանը և բարձր տեխնոլոգիաների համաշխարհային ոլորտում կարևոր կապերի հաստատմանը: Հնարավորություն կտա ներկայացնելու ՏՏ-ի և ԲՏ-ի զարգացումները, ձևավորելու հարթակ արտասահմանյան ներդրումների խթանման, արտերկրում տեղական կազմակերպությունների առաջխաղացման համար:
2.	Միջազգային համագործակցություն			Այս միջոցառման հիմնական նպատակներն են նպաստել լավագույն միջազգային փորձի ներդրմանը Հայաստանում: Նպաստել տարածաշրջանում Հայաստանի իմիջի ձևավորմանը՝ որպես ՏՏ-ի հանգույցի: Միաժամանակ կապահովվի նման նախաձեռնությունների շրջանակում ստանձնված պետական պարտավորությունների ապահովմանը:
	2.1. Հայ-հնդկական ՏՀՏ-ի ուսումնական կենտրոնի քնականոն գործունեության ապահովում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. ընթացքում	Ուսումնական ծրագրերի, դասընթացների, ինչպես նաև բարձր արտադրողականության հաշվողական տեխնոլոգիաներով (HPC) հետազոտական ծրագրերի իրականացում

1	2	3	4	5
	2.2. «Մայքրոտֆթ» ինովացիոն կենտրոնի բնականոն գործունեության ապահովում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. ընթացքում	Կենտրոնի զարժունեության ապահովում, դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում: Մոտավորապես 500 ուսանողի և մասնագետի կարողությունների զարգացում, մինչև 10 թիմի նախագծերի իրականացման աջակցություն:
	2.3. Կարողությունների զարգացման և բովանդակության ձևավորման համատեղ ծրագրերի իրականացում Ինթել, Սիսկո և այլ վերագալիս ընկերությունների հետ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. ընթացքում	Սիսկոյի ցանցային ակադեմիայի գործունեության ապահովում, մասնագիտական դասընթացների կազմակերպում, Սիսկոյի հետ ստորագրված հուշագրով նախատեսված այլ միջոցառումների իրականացում: Ինթել կազմակերպության հետ համատեղ վերապատրաստման դասընթացների իրականացում, բովանդակության ձևավորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ